

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՒ

Ե. ՓՈՐՓՈՍԵԱՆ

Նամակ կամ որ եւ է

զբուծիչ պէտքէ ուղղել առ

Տեղիւն ԱՐՇԱՆՈՅՍ րազրի


ԳԱՀԻՐԷ (Եգիպտոս)

E. TOROSSIAN

Dirac. propr. du journal arménien

ARCHALOUYCE

LE CAIRE (EGYPTE)



Լ Ր Ա Ք Ի Ր

ԱՁԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ուշ դանկն.	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԵՐ	
Տարեկան	Ֆրանկ 20
Վեցամսեայ	« 13

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻ ԿԱՆՆԻԿ ԵՒ ԹՂԹԱՍԱՐԻ ԺԱԽՔՐ ԽՆԵՐԱԳՐՈՒՅԵԱՆՍ ՎՐԱՅ Է՛

ԽՆԵՐԱԳՐՈՒՅԵԱՆՍ ՈՒՂՂՈՒՄ ԳՐՈՒՅԻՆԷՖ ԵՍ ԿՆՍՏԱՆԻՍ

ԱՁԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԲ Կանխիկ վճարելի են

ԿԱՐԵՒՈՐ ԱՁԴ

«ԱՐՇԱՆՈՅՍ» ի Երկրորդ տարեշրջանը առաջիկայ Օգոստոսի սկիզբը կ'աւարտի և Երրորդ տարեշրջանը պիտի սկսի արդէ սինակներու լայնութիւնը անփոփոխ պահելով, չորրորդ սինակի մը յաւելմամբ:

Այս առթիւ կը խնդրուի մեր այն բաժանորդներէն, որոնք մինչև ցարդ անփոյթ գտնուած են իրենց տարեվճարը ընելու, որպէսզի հաճին կարելի եղածին չափ շուտով մեր հասցէին շրջել իրենց պարտուց գումարը:

Իսկ այն բաժանորդները, որոնք առաջին շրջանէն ալ կը պարտին և դեռ վճարել չ'են ուղեր, եթէ մինչև մէկ ամիս մեզ չը հասցնեն իրենց պարտքերը, պիտի ստիպուինք մի առ մի հրատարակել իրենց անունները, իբր անպարտաճանաչ:

ԿԻՊՐՈՍԻ ՈՐԲԱՆՈՑԻՆ ՇՈՒՐՁԸ

Բ.

Ամբաստանութիւն մը, որ՝ առանց մի որ և է արտաքին ազդեցութեան ինքն իրենը կ'իյնայ և կը յնդի, կ'ըլլայ՝ սեռ. զրպարտութիւն: Որուն հեղինակը՝ աւելի և հեղինակին սատար ելողը նուազ աստիճանով պատասխանատու կ'ըլլան հանդէպ զրպարտուածին:

Բայց Կիպրոսի Որբանոցին խնդրոյն մէջ զարմանալի հակադրութեամբ մը, առաջինը գրեթէ կ'արդարանայ և վերջինը անխուսափելիօրէն կը գտտապարտուի:

Այս յեղաշրջումը այնքան ընական է որքան գիւրըմբռնելի, եթէ խորհինք որ ամենքնիս ալ բողոքող աշակերտին տարիքն ունեցած ենք, և — գրեթէ առանց բացառութեան — ամենքնիս ալ մեր ուսուցչէն, Տնօրէնէն, կառավարիչէն և նոյն իսկ վարի տնտեսէն գանգատած ենք մեր դրուարացական օրերուն մէջ. շատ անգամ — գրեթէ միշտ — մէկ կողմէն մեր յանցանքը ծածկելով թեթեւցնելու նկատելով կամ իբր արածեալ նկատելով, և միւս կողմէն մեր ենթարկուած պատիժը անհունապէս չափազանցելով, մինչև երկինք հասցնելով, մեզի վիճակակիցներուն մէջ մեր անձնական — թերևս թեթեւագոյն — պատիժը աշխարհիս ամենամեծ անարդարութիւնը կողմնակցութիւնը ներկայացնելով մեր աչքին, և մեր այս երբեմն անկեղծ — կարծիքն ու տպաւորու-

թիւնը մեր ծնողներուն պաշտպաններուն քով ալ յարգելի և ընդունելի ընելու ջանալով: Անմեղութեան, կամ՝ աւելի ճիշտն ըսելով անդիտակցութեան և նուազ պատասխանատուութեան տարիքին այս յատկանշական ընդթը, որ ընկերային կեանքին մի մանրանկարն է, մի միայն կրթական յարկերուն վերապահուած չ'է: Ո՛ր և ո՛ր գործի մէջ ալ գտնուի այդ տարիքը, արդիւնքը միևնոյն է, երբ իր անկարգ և անխոհեմ ազատասիրութիւնը սանձուած կ'զգայ:

Այս տեսակէտով, Կիպրոսի Որբանոցին գանգատող աշակերտը եթէ բողոքովին չ'արգարանար — լասնդի 16 տարեկան պատանի մ'է կ'ըսէ յօգուածագիրը — գէթ ներողաւորութիւն կը գտնէ թէ հանրութեան և թէ Հաստատութեան վարիչներուն քով:

Իսկ մայրը, ինչպէս առաջ ըսինք մօր մը սիրտը յարալուրանջ վտանգալից մ'է երբ խնդիրը տարակայ զակի մը առողջութեան և բարօրութեան վրայ է: Նա աւելի միտեալ է հաւատարմ անշահ քան բարի լուրերու: Մայրական գործով սնունդն է այս մշտադանջ վիճակը, առանց որս կ'ինքն միայն պիտի ունենայինք երկրիս վրայ: Ըստ այս նկատումի, և ուրիշ մի քանի յարակից պատճառներով, պատասխանատուութեան զերծ է դպրոցականին մայրն ալ, որուն հետեւած կը տեսնենք նաև իր միւս որդիին թերևս յարգելով մայրական կամքը և, մասնակցելով անոր անձկութեանց:

Բայց նա որ իրապէս պատասխանատու է հանրութեան առջև, դա այն յօգուածագիրն է, որ հեղինակեց և հրատարակ նետեց այդ անխուսափ « Կիպրոսի Սպանդանոցը »:

Սոյն տողերը գրողը երբէք մտադրած չ'է ապիկար կամ յաջողակ պաշտպանի գերկատարել Կիպրոսի-Կրթարան Որբանոցին հաշտոյն. նախ՝ վասնզի գատեր կան, որոնք իրենց վսեմութիւնը կը կորսնցնեն եթէ պաշտպանուին, և այս ալ անոնցմէ մին է. երկրորդ՝ վասնզի յիշեալ Հաստատութիւնը իր ետեւ ունի արդէն քառամեայ փայլուն չրջան մը: Յօգուածագիրս չ'ախդեր նաև որ Կիպրոսի Որբանոցը վեր կրնայ ըլլալ ամենքննադատութեան: Մարդկային ո՛չ մի հաստատութեան ներքի չ'է այդ յաւակնութիւնը: Նա՛ մինչև անգամ՝ կ'ընդունի որ մեծ կամ փոքր անկարգութիւններ կրնան տեղի ունենալ հան, ինչպէս այլուր: Բայց և այնպէս ո՛չ մէկ ուղղամիտ կրնայ խորհիլ որ այնքանը բուսական է գեանաքարչելու համար ընտանեզուրկներու Ուսումնարան մը, որուն խնամակալն ու մատակարարն է՝ ամբողջ Հայութիւնը . . . :

(Այս միջոցին լսեցի որ « Կիպրոսի Սպանդանոցը » ին շարունակութիւնը լոյս պիտի տեսնէ եղեր ամսոյս 14/27 ին. Ուստի այս խնդիրը բացողին անձնական իմաստալից տեսութիւնը քննելու չ'ձեռնարկած պարտք կը համարիմ սպասել այդ խօստացուած շարունակութեան ձիշտն ըսելով, չը վերջացած գրութեամբ մը զբաղիլ ինծի համար թերութիւն մ'էր, բայց ինչպէս երբեմն « Արշալոյս » ին, մասնաւորապէս « Նոր-Օր » ի վերջին ութնամսեայ հաւաքածոյն մէջ — ի բաց առեալ խոստացուած բայց երբէք երևան չ'ելած յօգուածները, « շարունակեցի » մնացած այնքան յօգուածներ մտադրուած են, որ՝ երբեք չարաթ սպասելէն ետքը՝ իրաւունք ունէի մի քիչ կասկածելու: Իցիւ թէ խոստացուած շարունակութիւնը համազիչ հանդամանքներով օժտուած ըլլար և այս կսկծալի հարցն ալ վերջնականապէս փակուէր):

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿՆԵՐ ՊՈՒԼԿԱՐԻԱՑԷՆ

Պուրկազ 1 Յուլիս 1901

1892 էն մինչև 1897 թուականը Պուրկազի Հնչակեան մասնաճիւղի վարչութեան անգամներէն մին եղած եմ եւ վարած եմ Տոմարակալ-կնքապահի պաշտօնը, հետեւաբար կը փութամ թորիկեան քնաւ մասնակցութիւն եւ ո եւ է յարաբերութիւն ունեցած չ'է Պուրկազի Հնչակեան մասնաճիւղի հետ: Բողոքովին սոճտ է « Հնչակ » ի մայիս և թուոյն մէջ երեւցած « Կրտսնահար » ստորագրութեամբ գրուած զրպարտալից յօդուածի պարունակութիւնը:

Յաւալի է յոյժ, որ « Հնչակ » եւ իր Պուրկազի « Մասնաճիւղը » փոխանակ իր ուշը ազգային նուիրական գատին վրայ սեւեռելու, ըսկտած է անհատական սնամէջ խնդիրներով ըզրաղիլ եւ այդու անպատուել նաև յեղափոխութեան Սուրբ անունը:

Յ. Գ. Մէկ մէկ օրինակ զրկած եմ հրատարակութեան համար « Իրաւունք » « Շարժում » « Ձայն Հայրենեաց » լրագիրներուն:

(*) ԵՄԱՆՕԹ. ԽՄԲ. — « Կնքապահ » ին բուն ստորագրութիւնը հաստատուած է Պուրկազի Թաղ. Խորհրդոյ Ատենապետի և Ատենապարի ստորագրութեամբ և Կնքով:

Ռուսչուք 1901 Յունիս 22

« Արշալոյս » ի . . . Խմբագրութեան
ի Կահիրէ

Մեծ . Տիար

Ներփակեալ շրջաբերական կոչը զոր կը
ղրկենք Ձեզ խնդրելով որ հաճիք ճշտաւարակել Ձեր
թերթին յառաջիկայ թիւին մէջ, միանգամայն
գոյութեան արտայայտութիւնն է մարմնի մը
որ անշուշտ իր նմանները պիտի ունենայ քիչ
օրէն ուրիշ քաղաքներու մէջ ալ :

Հայութեան ներկայ միակ նպատակին՝ ա-
զատութեան համար անվիճելի անհրաժեշտու-
թիւն մը գարձած գաղափար մը ինչպիսին է մի-
ութեան գաղափարը արդէն հետզհետէ զգալի
գարձած է մեր ժողովուրդին մէջ եւ անոր գոր-
ծարութիւնը անյետաձգելի :

Մեր նպատակն է զօրաւոր մղում մը տալ
այս գիտակցութեան եւ այս համոզումին յարած
ժողովուրդը կազմակերպուած վիճակի մը մէջ
գնելով աշխատիլ իրագործելու մեր բուն նպա-
տակը, որ միմիայն մեր յեղափոխական մար-
միններու ուժերուն միութեան եւ գործունէ-
ութեանց համերաշխութեան մէջ կը կայանայ :

Հետեւաբար բոլորովին հետու ենք նոր կու-
սակցութիւն մը հիմնելու յաւակնառութիւն ու
փառասիրութիւնն ունենալէ, որ ամենէն ցնորա-
կանը պիտի ըլլար մեր ներկայ ճգնաժամին եւ
հակազդող ոյժ մը թերեւս հայութեան ընդհա-
նուր նպատակին՝ ազատութեան իրագործմանը
հանդէպ :


Եւ որպէսզի գործը ակամայ այս ձեւը չ'ըս-
տանայ՝ մեզի սկզբունք ընտրած ենք երբէք չ'ը
միջամտել անցեալի կուսակցական վէճերուն,
մոռնալ մեր անցեալ կուսակցական հակումները
եւ բոլոր հայեցողութիւնները, բոլոր հակումնե-
րը երկու գաղափարի մէջ միայն մտնուողորէ-
յեղափոխութեան եւ միութեան —

Այս նպատակի իրագործման հետ կը վեր-
ջանայ եւ գոյութիւնը մեր կազմակերպութեան,
զոր այս նկատումներով « Յանձնաժողով » ենք
կոչած :

Արդ, բաւական համարելով առայժմ այս
քանի մը զլխաւոր տեղեկութիւնները մեր կազ-
մակերպութեան մասին, կը յուսանք, Ձեր ան-
կեղծութեան եւ Խմբագրական անաչառութեան
վրայ վստահ որ չ'պիտի հրաժարիք ներփակեալ
կոչը Ձեր թերթին մէջ ճշտաւարակելէ, որուն հա-
մար կանխաւ կը յայտնենք մեր շնորհակալու-
թիւնը :

Ի Դիմաց Հայ Յեղ. Միութեան Ռուսձուքի
Յանձնաժողովին
Քարտուղար Նախագահ
Ա. ՀԱՐՈՆ ՍՐԱՄԱՅԻՍ

ՀԱՅՐԵՆԱԿՅՆԵՐ



Արեան կսկծալի օրերէն յետոյ՝ արցունքի
զաւանդէտ եւ օրհասական օրերու մէջ, սպաւոր
Մայր-Հայրենիքի վերթակարօս սրտին արձա-
գանքն է այս, որ ամենէն քաղցր եւ ամենէն
սուրբ գիւրկնդխառնութիւն կը հրաւիրէ մեզ :

Արձագանգն է աս լացող մայրերու, որոնք
իրենց որդւոյն եղբորական մահը տեսնալէն խե-
լալիզ՝ արցունքի եւ ողբի մէջ կ'ապրին հիմայ,
իրենց զահիճներու խողիողման եւ մահուան հը-
ռընդիւնը լսելով մոլեգին տենչանքին եւ յոյ-
սին համար :

Արձագանգն է աս անպատուուած քոյրե-
րու, հիմայ հարէմի անկիւնները նետուած, ո-
րոնք կուրի յաղթանակէն յետոյ, այնքան մո-
լեգնօրէն կը տենչան իրենց վճռական վրէժ-
խնդրութիւնը թափել անոնց գլխուն, որ իրենց
բռնակալները եղան եւ գործվազին համբուրել
ձակասն ու սուրը անոնց, որ զիւրազնօրէն՝ ա-
զատաբար եղբոր մը պսակը պիտի ընդունին յե-
տոյ իրենց մատներէն :

... Եւ որբերուն, որոնք յաւիտեանապէս զըր-
կուած՝ մօր մը խնամոտ գորգաբանքէն, արհա-
ւիրքի մը պատկերը եւ սպաննուող հօր կամ եղ-
բոր մը ճիշերը կը յիշեն միայն ու կ'ապասին
իրենց պատանիի ամենէն խանդավառ եւ սնա-
րատ զինակցութիւնը նուիրելու մեզի :

... Եւ եղբայրներուն, բանտերու խորերը
մաշած, տառապած, որոնց շղթաներու շառաչիւ-
նը սակայն բանալն լուծութեան մէջ յայտով կ'ար-
ձագանգէ եւ ակնկալութեան չողը, ահարկու մը-
թութեան մէջ, մտաւոր արշաւայտի ծագման
յոյսովը կ'ապրեցնէ զիրենք :

Եւ վերջապէս անդրչիրմի արձագանգն է
աս անոնց, որոնք կախաղաններու վրայ բարձ-
րացան, սուրհներով մարտիրոսացան եւ սուրե-
րու տակ խողովուրդացան եւ անարտուէ՞լ իրենց
նահատակի մարող աչքերը վսեմ եւ աստղոտ ա-
պագային յառած՝ աւանդեցին իրենց հողին, եւ
իրենց հողին հետ մէկտեղ պարտականութիւն-
ներու ամենէն նուիրակները աւանդեցին մեզի :

Մեռած եւ կենդանի զոհերն են ասոնք բըռ-
նակալութեան, որ գազանէ մը աւելի անյազ,
գազանէ մը աւելի յամառ է իր բարբարոս տեն-
չերուն եւ ձգարմնիւնուն մէջ, բնաջինջ ընելու
ժողովուրդ մը, որ վարդաններ ծնած է եւ՛ Գե-
տոնեք, եւ՛ Մարտիկներ, եւ՛ Բարկէններ հայու-
թեան հերկայի ցաւը՝ ընդվզումին գանգովը
եւ արեան վրէժին փողովը փոխօրկելու :

Անարդեցիմք մենք սակայն անոնց յիշա-
տակը եւ ասելութեան ան թոյնը որ անոնք ի-
րենց անձին զոհաբերութեամբ ծնունդ տուին
մեր սրտին մէջ օր մը մեր գահիճին զէմ պոռթ-
կալու, — մենք ցնորուած աւանդաբուր մը պէս,
մեր եղբոր գէժ գործածեցինք զայն, այնքան ան-
զիտակից եւ խելայեղ մեր գիրքին մէջ, որ հայ-
րենիքի համար սպորիլ կարծեցինք, երբ մեր մեծ
օրհասին եւ ձգնաժամին մէջ կուսակցական սին
եւ շիրթ վէճերով զբաղեցանք :

Ճշմարիտ յեղափոխականի մը տեղ պաշտե-
ցինք անոնք, որ իրենց մթին կամ պատահական
անցեալով, սնապարծ, պոստա եւ ծիծաղելիօրէն
իմաստակ չեղտերով անպատուեցին սուրբ գաղա-
փարը եւ յիշատակը Պետոներուն եւ Մարտիկ-
ներուն, որոնք անէ՛ծքներուն ամենէն անաւորը
պիտի պոռթկային անկասկած իրենց զերեզման-
ներէն, բոլոր այդ իմաստակներուն գլխուն, որ
իրենց պաշտելի եւ անմահ անուաներով կը յո-
խորտան :

Տառապանքներուն ամենէն զաւանգոյնը
կրկինք մենք բայց չ'զգացինք սարսուղին
յուզումը կուտող բազուկներու եղբայրակցու-
թեան, զգացումներու եւ ուժերու միաբան
թափով մը եւ համերաշխ ճիգով մը յաղթանա-
կին ճամբան զիւրազնօրէն հարթելու :

Որովհետեւ երբ ձեռքերնիս երկնցուցինք
մեր միեւնոյն զգացումներով վառուած եղբորը
մեր վրէժինդիւր եւ մարտագոռ հողին վճիռը
գործողը միտաեղ, կեցի՛ր ըսին մեզի մեր
սրտին ձեռնածուները՝ « կեցի՛ր, խեղճ անկեղճ,
մի բաներ անոր ձեռքը, ան . . . եան է » , « հայ
չէ՛ » :

« Ասոնք այդ կերպ կը գործեն ըսին մեզի
եւ մենք այս կերպ » ու երբէք չի մատուցինք
թէ ի՛նչ եւ ե՛րբ ասոնք այդ կերպ գործեցին եւ
մենք այս կերպ :

Եւ չ'արժանացանք միթէ՛ Նըլլալի գարա-
նակալ բորենիին խոր քրքիչին որ իր նահա-
տակուած զոհերը տեսնալէ յետոյ, իր ցնորած
զոհերը իրենց այդ վշտալի ախաին մէջ տեսնա-
լու հրճուանքն ալ կ'ունենան հիմայ :

... Մտածուած ամենէն մեծ նախատինքին,
որ ամօթի փրկարար սարսուտովը պիտի ցնցէ
մեր ամբողջ էութիւնը եւ թոյլ չի տայ որ մեր
որդիներն ու թոռները անզպակելի թուրով մը
նախատին մեր պատմութեան այս մասը :

Որովհետեւ որքան որ անպակաս են մեր մէջ
անոնք, որ այլեւայլ գիտութիւնով կամ անկեղ-
ծօրէն հաւատացնել կուզեն ժողովուրդին, որ
ներկայի անշատ ուժերով կարելի է զիմադրել
զինուած բռնակալութեան մը, որ երկուսկայ-
ուածէն տարբեր գոյներով կ'երբեի իրակախու-
թեան մէջ, այնու ամենայնիւ ճշմարիտ բանա-
կանութիւնը եւ գառն փորձը հակառակը պիտի
պնդեն միշտ :

Եւ երբ խնդիրը կուգայ այս կենտական պա-
հանջի կարելիութեան եւ անկարելիութեան մա-
սին, այն ատեն մենք կ'ըսենք :

Այդ բանը կախում ունի մեր կուսակցու-
թիւններէն եւ կուսակցութիւնները՝ ժողովրդէն
Երբ ժողովուրդը պահանջէ՛ կրթականանայ :

Եւ ուժերու միութեան եւ համերաշխ գոր-
ծակցութեան գաղափարի իրականացումը՝ մեր
ազատագրութեան նախադուռը պիտի ըլլայ :

Ու հիմայ պիտի մոռնանք վայրկեան մը
անցեալի վէճերը, պիտի մոռնանք անցեալը եւ
երբ մեր փափաքած միութիւնն իրագործուի,
անոր փորձերէն գոտ առնելու համար կրկին պի-
տի յիշենք զայն :

Եւ մեր հրաւերը, կազմակերպուած գիրքի
մը մէջ այս անյետաձգելի պահանջը իրագործե-
լու, ուղղուած ժողովուրդի բոլոր զասակարկե-
րուն, բոլոր կուսակցութիւններուն, բոլոր մար-
միններուն, կ'ուզենք սրտովին որ գործունէու-
թեան եռանդի մղում մըն ալ ըլլայ անոնց, ո-
րոնց օրինակ կրնայ ըլլալ :

Կազմակերպել ժողովուրդը զիտակցական
գաղափարներու ազդեցութեամբ, ոգի ի բուն
պահանջել մեր մարմիններէն փոխադարձ զիջո-
ղութիւններու վրայ հիմնուած համաձայնու-
թեամբ մը իրագործելու միութեան գաղափարը
թղթակցելի ուրիշ քաղաքներու բոլոր այն
անկեղճ հայրենասէրներու հետ, որ համանպա-
տակ կազմակերպութեան մը հիմը դնել կ'ու-
զեն, խորհուրդներ տալ եւ խորհուրդներ ստա-
նալ :

Մեզի սկզբունք ընտրելով՝ երբէք չի մի-
ջամտել անցեալի կուսակցական վէճերու :

Անա նպատակը որուն պիտի նուիրուինք :

Եւ յուսով ենք որ ժողովուրդն ալ մեզի
հետ է :

ՀԱՅ ՅԵՂԱՎՈՒՅՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՐՈՒՄՉՈՒԻԹԻ ՅԱՆՁՆԱԾՈՂՈՎ
20 ՅՈՒՆԻՍ 1901 ՐՈՒՄՉՈՒԻԹ (ԿՆԻԳ)

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Կ. Պօլիս 21 Յունիս. — Այլեքսանդր մեծ
Իուքար Պօլիս հասած է սուլթանին այցե-
լութիւն տալու համար :

Բրէթօրիա 21 Յունիս. — Նախագահ
Քրիւկէրի կինը երեք օր թոքախտապէ տա-
ռապելով մեռած է շարաթ օրը :

Կը կարծուի թէ այս լուրը ուղղակի Պ.
Քրիւկէրի հազարդուած էր պաշտօնական հը-
րատարակութենէ առաջ :

Լոնտոն 22 Յունիս. — Մամուլը յարգա-
լիլ համակրութիւն մը ցոյց կուտայ հան-
դէպ Պ. Քրիւկէրի, իւր ունեցած կորստեան
պատճառաւ :

Բրէթօրիա 22 Յունիս. — Տիկին Քրիւ-
կէրի թաղման հանդէսը կիրակի օրը տե-
ղի պիտի ունենայ :

Ի. թրէյլթ 22 Յունիս. — Պ. Քրիւկէր
թէ կ'արտասած է, բայց առողջութիւնը
կատարեալ է : Անհամար միութարականներ-
հասած են օտար երկիրներէ :

Ուէլինկթըն 23 Յունիս. — Նոր-Ձէլան-
տաի կառավարութիւնը կը թախանձէ որ
Լոնտոնի մէջ արուեստներու համալսարան
մը հաստատուի ի յիշատակ Վիլթօրիա թա-
գուհւոյն, եւ որ մատչելի ըլլայ կայսրութեան
բոլոր ընակիչներուն :

Լոնտոն 28 Յունիս — Բրօքէսէօր Քօթ
թոքախտային համաժողովին մէջ նշա-
նակելի գրութիւն մը կարդաց, որուն մէջ
կը պնդէ թէ՛ թուրք այդ հիւանդութեան
տարածման գլխաւոր աղբիւրն է եւ թէ՛ թո-
քախտը կենդանիներէն մարդուն չ'հաղորդ-
ուիլը եւ հետեւաբար չի փոխանցուիլ ո՛չ կա-
թէն ո՛չ կարագէն եւ ո՛չ ալ մսէն :

Քէլթաուն 24 Յունիս. — Գօլօնիի մէջ
չատ մը ապտամբներու վրայ մահու պա-
տիժ ի գործ դրուած է :

Լոնտոն 24 Յունիս. — Տիւրքախտի հա-
մաժողովին մէջ, Բրօքէսէօր Պրուարտէլ եւ

ուրիշ գիտուններ՝ ուրիշ խուզարկութիւններ ընելէ առաջ Տր. Քոլտի մէթոտը գործածելը մերժեցին :

Կ. Պօլիս 24 Յուլիս .-- Ժամատխարհի Ե. րեք նոր դէպքեր հաստատուեցան Ստամպուլի մէջ . ճամբորդները մեկնելու առնելու 48 ժամուան հսկողութեան պիտի ենթարկուին :

Նարուի 24 Յուլիս .-- Պ. Քրիստի վեճակին վրայ զգալի բարելաւութիւն մը կը տեսնուի : Բժշկական տեղեկագիրները կը հաստատեն թէ սրտի բարախուճները կը կանոնաւորուին :

Քէյթթաուն 25 Յուլիս .-- Կ'ըսուի թէ Պօլսնեքը ընդարձակ ծրագիր մը կը պատրաստեն Բարեխուճ գաղթականութեան վերայ արշաւելու համար :

Պրիւքսէլ 25 Յուլիս .-- Նախագահ Քրիւկէր հոկտեմբեր ամսոյն Ափրիկէ պիտի վերադառնայ :

Պրիւքսէլ 25 Յուլիս .-- Տեղական լրագիր մը կ'ըսէ թէ Անգղիոյ և Պէլճիգայի մէջ եղած բանակցութիւնները յանգած են կարգադրութեան մը , որով Պահր-էլ-Կազալի երկրէն մաս մը ինչպէս նաև Լատոփ ցամաքը , պիտի նշանակուին իբր Քօնկօի ազատ պետութեան մասը մինչև 1,5օօօ թագաւորին մահը , յետոյ եզրպտոսի մը նալու պայմանաւ :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ն. Բ. Խախիզ Փարիզ հասած ըլլալով Օթել Պրիսթօլ իջեանած է. Նորին Բարձրութեան ընկերացած էր նախկին Աւստրիացի գիւտնագէտ Պօզօնի Կոմսը :

ԺԱՆՏԱՆՍԸ .-- Վերջին լուրերուն նոյնը լով Բօր-Սախի հիւանդանոցին մէջ մահ մը պատահած է և Ալեքսանդրիոյ մէջ ալ նոր դէպք մը հաստատուած է երիտասարդ յոյնի մը վրայ որ կը բնակի հին մաքսի փողոցը , և ամսոյս 24 ին մեկուսացուցած են զայն :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ANCH' IO SON UOMO

(ԵՍ ԱՆ ՄԱՐԴ ԵՄ) (14)

Է .

— Իսկ ցամաքի կողմէն :

— Ցամաքէն փախուստի մեծ հաւանականութիւն չ'իմ տեսներ , բայց և այնպէս անտեղի չ'է գողտըութիւններ ձեռք առնել :

— Ոյո՞ , այո՞ , ըրաւ Գոյմագամը , աչքերը յածելով սեղանին վրայ :

Եւ յանկարծ ըսաւ .

— Քիչ մնաց պիտի մոռնայի : Վալին ինձ կը հեռագրէ հաւատարիմ և վստահելի անձ մը մը խրկելի ք . գիւղը , բնակիչներուն ներքին տըրամադրութիւնները և՛ մանաւանդ՝ իբր զբոսաշրջիկ հոն հասած մի քանի կասկածառիթ Ամերիկացիներու շարժումները քննելու և ուսումնասիրելու համար : Ինչպէս կը տեսնես , բաւական փափուկ խնդիր մ'է . ուստի քեզի կը յանձնեմ այս պաշտօնը , պէտք է որ վաղն առտու մեկնին :

— Բայց , պէյ , պատասխանեց Ղուկաս էֆէնտի , յայտնի զժկամակութեամբ մը , այդ անկարելի է :

— Ինչո՞ւ :

— Վասնզի շրջակայ հայերը հաշտ աչքով չ'են նայիր ինձի :

— Կը սխալիս :

— Ինչպէս :

Չակագրիկի մէջ գարնանուելու վրայ են մինչև այսօր 14 լուսնամ , Բօր-Սախիտի և Ալեքսանդրիոյ մէջ երկերկու :

Մարտիլիական մամուլը իր մասնաւոր ժողովքին մէջ կը փափաքի և կը խնդրէ չողենաւային ընկերութիւններէն , որպէսզի արար հնոցպաններ չ'ընդունին , որոնց մէջ ժամտխարհ երևան եկած է :

Կ. ՊՕԼԻՍ .-- Ամսոյս 17 ին Ղալաթիոյ մէջ այտուցաւոր ժամատխարհ երկու դէպք հաստատուած է բռնուածներէն մին հրէայ ապսկեգործ մ'է , իսկ միւսը անոր բեռնակիրը նոյնպէս հրէայ , որ ապսկեգործի պաշտօնեայն է եղեր :

ՔԱՐԱՆԹԻՆԱ .-- Սիրիա մեկնող Մէւաժրի Մարիթիմի նաւերէ ճամբորդներ չ'պիտի առնեն , եզրպտոսէն մեկնող նաւերուն վրայ քարանթիւնա հաստատուած ըլլալուն պատճառաւ :

« ՍԻԱԼԻ ՄԸ ԱՌԹԻԻ »

Վերնագրով յօդուած մը կարգացի քանի մը օր առաջ անձնական գործերով Աղէքսանդրիա գտնուած միջոցիս :

Արդէն Գահիրէէն մեկնելէս առաջ « ՍԻԱԼԻ ՄԸ ԱՌԹԻԻ » յօդուածին հեղինակ Տր. Մառի Պէյլէրեանի խօսեցեալ Պ. Աւետիս Նազչեան , (ԱՎՕ) ի և իր ընկերոջը ապելատիւթիւն բողոք ընթացքը տեսնելով վերջնապէս իմ քովէս հեռացնելու նիւթադրել կուտայ ինձ թէ գոնէ Մառիի միջոցաւ և տորագրութեամբ զԵրուած յօդուած մը կրնայ հրատարակուիլ . սակայն չ'էի կարծեր որ մեր երբեմնի աշխատակիցը՝ Մառի , այնչափ անխոհեմ և գիւրաճաւան կը գտնուի սխալ մը սեղանու նպատակաւ յօդուած մը ստորագրել , ամենամեծ սխալներու մէջ գըլորելու պայմանաւ . ուստի մեր առաջիկայ թըլուով կ'սկսինք ուղղել մեր աշխատակիցին սխալները , ուրիշ առիթներու մէջ նոյնը չ'կրկնուելու համար : Մենք չ'ենք ցաւեր որ Մառի իր սխալները մեր միջոցէպիւն առթիւ կը գործէ , որովհետեւ անոնք ուղղելի են , որչափ որ անգարմանիլ ըլլան :

ՄԵՐ ՉՈՐԵՔԱՐԹԻԻ ԹԻԻԸ

Պիտի պարունակէ Տիար Չարեհ Սըվազլի կենդանագիրը և համառօտ կենսագրականը , որուն վրայ տեղական թերթերու մէջ շատ խօսուած ըլլալուն համար՝ բարեկամներու ոմանց յայտնած փափաքին համաձայն

— Եթէ առաջ կասկածելի էիր քու կրօնակիցներու , այսօր այդ կասկածը համակրութեան փոխուած է :

— Ո՞րպիսի հրաշքով . . . :

— Ինչպէս որ Արգար սղոյին տխմարաբար փախուստը զայն իբր մեծ յեղափոխական մը ճանչցուց գիտցողին չ'գիտցողին , նոյն իսկ մեր վալիին , այնպէս ալ քու՝ անոր ասն մէջ ձեռքակալու իլզ և իմ նպատակաւոր հրամանովս քանի մ'օր բանտին մէջ մնալը քեզ լուաց , մաքրեց ամեն կասկածէ և Ղուկաս էֆէնտի , միթէ կը կարծես թէ այնքան ապուշ եմ որ ըրածս չ'եմ գիտեր :

— Բաւ լիցի , պէյ . ձեր վստահութեան խոնորն ծառան միշտ սքանչացած է ձեր իմաստութեան և ներքամութեան վրայ , պատասխանեց փաստաբանը յարգալի խոնարհութեամբ մը :

— Հետեւաբար վաղն առտու պիտի մեկնիս :

— Վաղը կէս օր :

— Պատճա՞ռ :

— Չուտ անձնական փոքր գործ մ'ունիմ :

— Սիրային , հէ՞ . . . բաղաւոր Ղուկաս :

— Ամուրիութիւնը , վստահաբայ պէյ . . . :

— Կը հասկնամ , կը հասկնամ : Պէտք է որ քեզ ամուսնացնենք , կուրքիդ վրայ ունենալով այն շքանշանը , զոր՝ ի վարձատրութիւն քու հաւատարմութեանդ՝ Նորին կայսերական վեհափառութիւնը չ'պիտի ուշանայ քեզի շնորհելու :

— Սիրային գործ , հէ՞ — կ'ըսէր ինքն իրեն Ղուկաս էֆէնտի , երբ իր առնը կ'երթար Գայ-

պատրաստել տուած ենք զայն :

Չորեքշաբթիի թիւը ձեռքէ գնողներուն համար բայտաւար պիտի աշտէ մէկ զըշ . ողջ , բայց բաժանորդաց համար ո՛ր և է փոփոխութիւն չ'պիտի լինի :

ԼՍԱՐԱՆ ԸՆԹԵՐՅԱՏՈՒՆ

— ԳՅՕԳ —

Գործ . Վարչութիւնս պատիւ ունի ծանուցանել Արգոյ հասարակութեան թէ՛ առաջիկայ Յուլիս 28ի կիրակի օր առաւօտեան ժամը 10 ին , Ընկերութիւնս իր անդամիկ Լսարանը պիտի տայ Ֆրէրներու ձրի վարժարանին կից Ընթերցատան մէջ :

Պիտի Ատենախօսեն .

Տիար Յովհաննէս Սեթեան

» Արսէն Չարեհեան

Երկսեւ կրթատէր Ազգայիններ կը հրաւիրուին իրենց ներկայութեամբ պատուել սոյն հանգէսը :

Ա Չ Դ

— Ծ —

ՕՆՆԻԿ ՊԵՅԼԵՐԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ՛ ամսոյս 25 էն սկսեալ Աթապա-էլ-Խատրաէն փոխադրուած է Շարա-Ապտիլ-Ազիզ , եզրպտական թատրոնին քով գտնուած սափրիչի խանութը :

Օ . ՊԵՅԼԵՐԵԱՆ կը յուսայ թէ իր յաճախորդներն պիտի բարեհաճին ըստ առաջնոյն շարունակել իրենց այցելութիւնը , վստահ ըլլալով որ դարձեալ ո՛ր և շանք չ'պիտի խնայուի զիրենք գո՛հ կացուցանելու համար :

Պատ . յաճախորդք պիտի գտնեն նաև անուշահոտութեանց և թուրքի վերաբերեալ բազմաթիւ և ընտիր առարկաներ , խիստ գիւրամատչելի գիներով :

Փորձեցեք և պիտի համոզուիք :

մագամը վրդ Պէհէթ Պէյին քովէն մեկնելէն յետոյ — սերային գործ . . . սոկեղէն գործ , պէյ , սոկեղէն գործ : Պէտք եղած տեղեկութիւնները ինձմէ առնելէդ ետքը կը ջանաս զիս հեռացնել , սրպէսզի սիրելի քեռայրիս միակ ժառանգը մընտ . . . Այո՞ , կ'սքանչանամ քու իմաստութեանը վրայ , բայց իմ իմաստութեանս համար ալ կը մեռնիմ . . . Գոն լրտեսներ դի՛ր հիւպատոսարանին , ֆրանսական չողենաւներուն բողոք տիքը , և զայրացուր շիլ աչք հիւպատոսը . գոք իրարու հետ պատերազմեցէք : Իսկ ես , վաղըն առտու , միշտու կէս օր կը համոզուիմ ձերօղամուն , անոր աչքերը չ'աղանջելով քանի մը հարիւր սոկիներով , զորոնք կ'առնեմ քեռայրիս հազար երկու հարիւրոց քսակէն . անկէ ետքը փախուսականը յաջողի փախիլ կամ օձիքը ձեռք տայ . այդ իրեն գիտնալու բանն է . և , լուսնամ զձեռս իմ . . . Գալով շքանշանին գոր վրդ Պէյը ինձի խոտացած է բաւական ժամանակէ ի վեր , կը յուսամ զայն ալ ստանալ ուրիշ տոթիւ . . . ստիթներու տեղատարափին մէջ կ'ապրինք կոր հիմայ . . . Իսկ եթէ Խաւաքի ապուշը չ'համոզուելով իր տեսն չ'արտաքուէ այդ իշխանացուն — բան մը՝ որուն վրայ խորհելն անգամ աւելորդ կը համարիմ — այն առնել կառավարութիւնը կը միջամտէ . վրդ պէյը ինձի բաժին մը կը հանէ և շքանշանին տոթիւն ալ այս եղանկ ըլլայ . . . Իրտւ . վրդ պէյը ինձի կրնայ գարմանալ թէ՛ ինչպէս ֆրանսական հիւպատոսը սնը յանկարծ խեղճուկրակ Խատրաէոյ մը հիւզակին կրնայ փոխուիլ . բայց այն առնել կը յուսամ այդ հարցումին ալ գոհացուցիչ պատասխան մը յերիւրիւ . . . :

(Շարունակելի)

Ա . ՊԱԼԵԱՆ

ՄԹԱՌ ԼԱՅՖ

ԼՈՂՏՈՂԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնեալ 1843

Բացարձակ ապահովութիւն . — Չափաւոր ապահովագրի . — Ապահովագրի հնութեան համեմատ շահու առաւելութիւն . — Իրաւանց պահպանութիւն՝ ապահովագրի վրձարմանց յապաղումի պահուն . — Չափող պարագաներու մէջ անմիջական հաշուեյարգարութիւն . — Եւրո թափանցում ամեն Հինք ՏԱՐԻՆ մէկ անգամ :

Ս. ԼԻՏՆԱՐ

Ընդհանուր ներկայացուցիչ եգիպտոսի

ԹԱՅՃԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԵՒ

ՄԱՆԿԱՊԱՐՏԻՉ

Ի Շարս Մոնիանմէս Աշի

Թեղիքի ղեկարմին ղիւնացի փողոցին մէջ թիւ 7

Սոյն հաստատութեան մէջ կ'աւանդուին Մայրենի լեզու, Ֆրանսերեն, կրօնագրութիւն եւ ամեն գիտութեանց սկզբունք . Օրիորդաց համար ամեն տեսակ ձեռագործք :

Մտողք գո՛ր պիտի մնան իրենց զաւակաց տրուած մասնաւոր խնամքներէն . փափաքողք կրնան դիմել ի վարժարան ամեն օր 8-11, բացի կիրակէէ :

ԿՕՇԿԱԿԱՐ

Փ. ԵՒ Յ. ՊԵՏՐՐԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

Պազար-Մուրուր թիւ 39

Կ'ուզէ՞ք ունենալ հմուտ վարպետի ձեռքէ ելած, ֆրանսական նորաձեւութեանց համապատասխանող, ոտքերը կոշտերու ցաւերէն ազատ պահող եւ դիմացկուն կօշիկներ :

Դիմեցէ՛ք ի Պազար-Մուրուր թիւ 39 խանութին մէջ հաստատուած Պէշիրեան եղբարց, որոնց գործածած ապրանքներու տոկունութիւնն եւ ձեւերու մասին ունեցած հոգածութիւնը ամեն տարակոյտէ վեր է : Պէշիրեան եղբարք իրենց յաճախորդաց ըրած յանձնարարութիւնները փութով եւ մեծ խնամով կը պատրաստեն :

Բաւ է միայն մէկ անգամ դիմել իրենց . ապահովագրէս մնայուն յաճախորդ պիտի լինիք :

ՔԱՐԻՈՒՏԻ ԸՆՏԻՐ ԱԾՈՒԽ

Ունէինք մինչև ցարդ հայ մը որ գիտնար մտածել թէ՛ ամուսին ալ մեծաքանակ ապտում կ'ունենայ եւ կրնայ կարեւոր շահ արտադրել : Ասեւորի այդ ասպարէզն ալ օտարներուն թողուած էր :

Տիար Յակոբ Վարդանեան (Սանտակահի քեռորդի) այժմ ամենաբնարի ամուսին վաճառականութեամբ կ'զբտողի եւ մրցում բացած է օտարներուն դէմ :

Դիմեցէ՛ք իր միջնորդը Սուգ-Սուտար թիւ 17 եւ 18 :

Անխարդախ կշիռ եւ չափաւոր գին :

ՀՅԷՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԹ 26 ՅՈՒՆԻՍ 1901					
3925	2828	2563	1942	2453	132
426	1453	1577	2511	2821	2999
4861	6415	6861	6263	7826	7016
7719	7565	8497	8495	8937	9156
9076 9758 9530					

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ԹՈՐՈՍԵԱՆԻ

ԳԱՌԼՕ Մ - ՊԱՍՄԱՃԵԱՆ

ԵՒ ԸՆԿԵՐՔ

ՕՔԷԼ ՄՕՆՖԵՐԱԹՕ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

Պատիւ ունինք ծանուցանել արգոյ հասարակութեան թէ վերջերս հաստատուած ըլլալով հրապարակս, կ'ընդունինք եւ կ'աւանտանք ամեն տեսակ եւ ամեն ազգի ապրանքայ յանձնարարութիւնք, ինչպէս ժամացոյցի, գոհարակեանց, արեւելեան եւ եւրոպական զանազան տեսակ գունաւոր եւ ձեւաւոր քարերու, Գոյումպիական Ֆոնօկրաֆներու, ինչպէս նաեւ գրուած եւ անգիր խոզովակներու . — գովան . — (մեծաքանակ) . եւրոպական նրբանիւս կողովիկներու եւ հօտեղեանց եւայլն :

Մասնաւորապէս համաձայնած լինելով Պօլտոյ Անտէլիպ (Մարտիրոս Պէշիրեան) տան հետ, որուն ապրանքները մեծ գնահատման արժանացած են նոյն իսկ եւրոպական հրապարակաց վըրայ, միշտ ի միջեր ունինք յիշեալ հանրածանօթ տան ամեն տեսակ ապրանքները . ինչպէս Re-producteur Andelib (Ֆոնօկրաֆի ասեղ) որ անմրցելի է հրապարակին վրայ, եւ Գոյումպիական Ֆոնօկրաֆներու ներկայացուցիչ Մ. Պոստօթի սքանչելի անապակայն եղած է :

Մեր արտադրութեան տակ ունինք Անտէլիպի գործարանին զանազան նուազներն . ինչպէս Մանսոյի, Բանոն, Ուր եւն . եւ ֆոնօկրաֆի համար սաճկական եղանակներու վրայ չափուած հին եւ նոր վարպետ երգողներու ընտիր Գովաններ :

Կ'աւանտանք կատարել Մաքսային ամեն տեսակ գործողութիւնք փութով եւ չափաւոր փոխարինութեամբ :

Կը գանձենք զանազան երկրներու փոխանակ սղրեր :

Բաց աստի ընկերութիւնս Լոնտոնի, Պօլտոյ, Գահիրէի, Եաֆայի եւ Երուսաղէմի մէջ թըղթակիցներ ունենալով, կ'աւանտանք այդ տեղերուն համար ամեն տեսակ ներածում եւ արտածում :

Մեր հասցէն է CARLO M. BASMADJIAN et Cio. Okelle Monferrato Alexandrie

Ս Ի Ն Կ Է Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալաքի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթոլ Օթէլի ճիշդ դիմաց, Գաֆէ Տը Լա Պուրսի կից :

Հին ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լուազոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐ ներն են եւ ասոնցմէ մինչև ցարդ 17, 000, 000 ծախուած է :

400 և աւելի վիսյակներով եւ մեծայնեով վարձարուած, երաշխաւորեալ մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵՄ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահափիսին մէջ ստացած է :

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՑ-ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՅ

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե. Բ. ԱՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԷՐ ի յաշկանշիկն :



Ձրի դասեր եւ նորոգութիւններ, ՍԻՆԿԷՐ մեքենայից համար, յաճախորդաց աստներուն մէջ :

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւն հին մեքենայից եւ նորոգութիւն ամեն կաշի Մեքենայից

ԴԻՆ ՉՍՓԱՒՈՐ

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵՈՐ 563 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները : Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ այլաբար ուրիշ սրեւէ ընկերութեան մէկ միլիար աւելի է :

ԳԷՈՐԳ ԵՎԱԻՕՑ ՆԵՐԿԱՎ յացուցիչ ի Գահիրէ

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործախտար յՊէշի քանդ դիւս :